



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ TACIS ԾՐԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

# Քաղաքական և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոն (AEPLAC)

EUROPEAID/126944/C/SER/AM  
Ծառայությունների մատուցման պայամանագիր No 202089

## ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

հունիս 2009թ.  
Երևան, Հայաստան

Սույն ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ կողմից

## Ջեկույցի տիտղոսաթերթ

|                    |  |  |                                   |
|--------------------|--|--|-----------------------------------|
| Ծրագրի անվանում:   | Քաղաքական և իրավական<br>խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոն – փուլ V |  |                                   |
| Պայմանագրի համար:  | TACIS/2009/202089  |  |                                   |
| Երկիր:             | Հայաստան   |  |                                   |
|                    | Ազգային գործընկեր  |  | ԵՀ խորհրդատու                     |
| Անուն:             | ՀՀ կառավարության<br>աշխատակազմ   |  | ALTAIR ASESORES S.L.              |
| Հասցե :            | Կառավարական տուն 1<br>0010 Երևան, Հայաստան                             |  | Ջուրբանո, 94-3 Ե,<br>28003 Մադրիդ |
| Հեռախոսահամար:     | (+374 10) 52 09 33   |  | (+34) 913992588                   |
| Ֆաքս:              | (+374 10) 51 57 37   |  | (+34) 913991629                   |
| Թեկստի համար:      | _____  |  | _____                             |
| Համակարգող:        | Դավիթ Սարգսյան<br>Աշխատակազմի ղեկավար                                  |  | Դավիդ Ուռենյա<br>Ծրագրի տնօրեն    |
| Ստորագրություններ: | _____  |  | _____                             |

Ջեկույցի հրապարակման ամսաթիվը:

հունիսի 30, 2009թ

Հաշվետու ժամանակաշրջանը:

ապրիլի 1 – հունիսի 30, 2009թ

Ջեկույցի հեղինակներ:

Ալեքսեյ Սեկարև՝ Երևանի աշխատակազմի  
աջակցությամբ

|                                       |                   |                  |           |
|---------------------------------------|-------------------|------------------|-----------|
| ԵՄ մոնիտորինգի &<br>գնահատման բաժին   | _____             | _____            | _____     |
|                                       | [անուն, ազգանուն] | [ստորագրություն] | [ամսաթիվ] |
| ԵՀ պատվիրակություն                    | _____             | _____            | _____     |
|                                       | [անուն, ազգանուն] | [ստորագրություն] | [ամսաթիվ] |
| TACIS-ի գրասենյակ<br>[Ծրագրի ղեկավար] | _____             | _____            | _____     |
|                                       | [անուն, ազգանուն] | [ստորագրություն] | [ամսաթիվ] |

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

|  |           |
|--|-----------|
| <b>1. ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ</b>  | <b>4</b>  |
| <b>2. ԾՐԱԳՐԻ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՓՈՒՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ</b>   | <b>6</b>  |
| 2.1. Ծրագրի միջավայրի փոփոխություններ  | 6         |
| 2.1.1 ԵՄ արևելյան գործընկերության պաշտոնական մեկնարկ   | 6         |
| 2.1.2 2009-11թթ. ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացման ապահովմանն ուղղված միջոցառումների ցանկի հաստատում                      | 6         |
| 2.1.3 Հայաստանում ԵՄ խորհրդատվական խմբի գործունեության մեկնարկ   | 7         |
| 2.1.4 Հայաստանում ԵՀՔ կատարման ընթացքի վերաբերյալ զեկույց;<br>ԵՀ Առևտրի հարցերով քարտուղարության փաստահավաք առաքելության զեկույց | 7         |
| 2.2. AEPLAC-ի օժանդակ աշխատակազմի հավաքագրում  | 8         |
| 2.3. Ծրագրի գրասենյակի վարձակալում, վեբ-կայքի պատրաստում   | 9         |
| 2.4. Հիմնական խնդիրներ և բացեր   | 9         |
| 2.5. Արդյունքներ   | 10        |
| <b>3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ</b>  | <b>10</b> |
| 3.1. Ծրագրի ցանց   | 10        |
| 3.1.1 Ծրագրի գործընկեր   | 10        |
| 3.1.2 Ծրագրի շահառուներ  | 11        |
| 3.1.3 Այլ շահագրգիռ կառույցներ   | 12        |
| 3.2. ԵՄ խորհրդատվական խմբի հետ ծրագրի գերակայությունների սահմանում   | 12        |
| 3.3. Համակարգում այլ ծրագրերի հետ  | 12        |
| 3.4. Խոչընդոտներ, ռիսկեր և ենթադրություններ  | 13        |
| 3.5. Ամբողջ ծրագրի պլանավորում   | 14        |
| 3.5.1 Կարողությունների զարգացում   | 14        |
| 3.5.2 ԵՄ լուսաբանում Երևանում և մարզերում  | 14        |
| 3.5.3 Նախապես չպլանավորված գործողություններ  | 16        |
| <b>ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ</b>   | <b>17</b> |
| <b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ</b>   |           |
| Հավելված 1. Ընդհանուր աշխատանքային պլան  |           |
| Հավելված 2. Կարողությունների զարգացման պլան  |           |
| Հավելված 3. Կարողությունների զարգացման կարիքների գնահատում և AEPLAC-ի` կարողությունների զարգացման պլանի գերակայություններ        |           |
| Հավելված 4. Հանդիպումների ցանկ   |           |

## 1. Ծրագրի ամփոփ նկարագիր<sup>1</sup>

|  |
|--|
| Ծրագրի անվանումը: Քաղաքական և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոն<br>– Փուլ V |
| Պայմանագրի համարը : TACIS/2009/202089  |
| Երկիրը: Հայաստան   |

### Ծրագրի նպատակները

Սահմանված Իրավասությունների շրջանակի (ԻՇ) համաձայն ծրագրի հիմնական նպատակն է՝ նպաստել Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը (ԳՀՀ) և Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ԵՀՔ) իրականացման նպատակով Հայաստանի հանրային կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը՝ ԵՄ խորհրդատվական խմբի և ԵՀ պատվիրակության ղեկավարությամբ:

AEPLAC V-ը հետապնդում է երեք նպատակ, մասնավորապես՝

- Նպատակ 1: Աջակցել Հայաստանի Հանրապետությանը՝ զարգացնելու հանրային կառավարման այն մարմինների կարողությունները, որոնք լիազորված են զբաղվելու ԵՄ ինտեգրման հարցերով՝ ԳՀՀ և ԵՀՔ իրականացման միջոցով;
- Նպատակ 2: Աջակցել նախօրոք ընտրված ՀՀ հանրային կառավարման մարմիններին աջակցող ԵՄ խորհրդատվական խմբին՝ խորհրդատվություն տրամադրելու այդ մարմիններին ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացման նպատակով;
- Նպատակ 3: Լուսաբանել ԵՄ-ը և բարձրացնել ԵՄ վերաբերյալ իրազեկությունը ամբողջ երկրում և հասարակության տարբեր հատվածների շրջանում:

Ծրագրի ավարտին ակնկալվող արդյունքներն են՝

- ԵՀՔ գործողությունների ծրագիրն իրականացնելու՝ ՀՀ իշխանությունների կարողությունը զգալիորեն մեծացել է;
- ԵՀՔ գործիքների հետ աշխատելու կառավարչական կարողությունները զարգացել են և հանրային կառավարման լիազոր մարմիններում աշխատում են վերապատրաստված քաղաքացիական ծառայողներ, ովքեր տիրապետում են պլանավորելու, գերակայություններ սահմանելու, համակարգելու և վերահսկողություն իրականացնելու հմտությունների, ինչպես նաև ունակ են օրենսդրության վերլուծություն կատարել:
- ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմամբ զբաղվող հանրային կառավարման լիազոր մարմինների, ինչպես նաև ԵՄ արժեքների տարածման, Երևանում ու մարզերում ԵՄ լուսաբանման գործում զգալի դեր խաղացող շահագրգիռ կողմերի (համալսարանների, առևտրի պալատների, հետազոտական կենտրոնների, տեղեկատվական կենտրոնների) միջև հաստատվել են նոր և շահեկան համագործակցային հարաբերություններ:
- Երևանում և մարզերում ԵՄ վերաբերյալ ընդհանուր տեղեկացվածության մակարդակը ընդհանուր բնակչության և առանձին խմբերի՝ մասնավորապես գործարարների և որոշում ընդունողների շրջանում զգալիորեն աճել է:

AEPLAC V-ն իրականացնում է հետևյալ աշխատանքները՝

<sup>1</sup> Այս բաժինը հիմնված է սահմանված Իրավասությունների շրջանակի վրա:

- **Գործողություն 1:** Աջակցել Հայաստանին՝ զարգացնելու այն հանրային կառավարման մարմինների կարողությունները, որոնք լիազորված են զբաղվելու ԵՄ ինտեգրման հարցերով:

Այս գործողությունը կմշակվի և կիրականացվի ԵՄ խորհրդատվական խմբի հետ սերտ համագործակցությամբ: Մեկնարկային փուլում կատարված մանրակրկիտ վերլուծության (ինչպես նաև ԵՀ և այլ դոնորների կողմից նախկինում կատարված ուսումնասիրությունների) հիման վրա խորհրդատուն կներկայացնի առաջարկություններ՝ ընտրված հանրային կառավարման մարմինների վերակազմավորման և կարողությունների զարգացման ուղիների և այդ մարմինների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպման պլանի վերաբերյալ, որոնց նպատակն է ԵՄ ինտեգրման հարցերով զբաղվելու համար զարգացնել այդ մարմինների կարողությունները: ՀՀ կառավարության՝ բարեփոխումներ ծրագրելու և իրականացնելու ռազմավարական կարողությունները (այդ թվում, օգտագործելով նաև AEPLAC-ից մինչ այժմ ստացված աջակցությունը) մեծացնելու նպատակով՝ խորհրդատուն, ՀՀ իշխանությունների և ԵՀ պատվիրակության հետ սերտ համագործակցությամբ և ԵՄ խորհրդատվական խմբի ղեկավարությամբ, կքննարկի ՀՀ վարչապետի աշխատակազմում վարչության կամ բաժնի, կամ անմիջապես վարչապետին զեկուցող միավորի ստեղծման հնարավորությունը: Խորհրդատուն կկազմակերպի դասընթացներ և/կամ ուսումնական այցելություններ՝ փորձելով վեր հանել ԵՀՔ կամ ԵՄ երկներում առկա համապատասխան փորձը և, որքան հնարավոր է հաճախ, կհաստատի համագործակցային հարաբերություններ ԵՄ կողմից ֆինանսավորվող այլ ծրագրերի (օրինակ՝ Երևանի պետական համալսարանի իրավաբանության ֆակուլտետի Եվրոպական իրավունքի ամբիոնի) և/կամ գործիքների՝ մասնավորապես TAIEX-ի և SIGMA-ի հետ: Խորհրդատուն նաև կնախաձեռնի և կխրախուսի հնարավոր համագործակցային հարաբերությունների հաստատումը ԵՄ տարբեր հարցերով զբաղվող Հայաստանում գործող կառույցների միջև՝ ի հավելումն պաշտոնական կառույցների և հանրային կառավարման մարմինների, ինչպիսիք են Երևանի պետական համալսարանի Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնը (ԵԻԻԿ), Եվրոպական և Ֆրանսիական համալսարանները, առևտրի պալատները, ERIICTA-ն (ցուցակն ամբողջական չէ) :

- **Գործողություն 2:** ԵՄ լուսաբանում Երևանում և մարզերում:

Ծրագրի մեկնարկային փուլում խորհրդատուն կմշակի աշխատանքային ծրագիր՝ Երևանում և մարզերում ԵՄ լուսաբանման ծավալը մեծացնելու նպատակով: Այս գործողությունը պետք է համաձայնեցվի ԵՄ խորհրդատվական խմբի և ԵՀ պատվիրակության հետ:

Այս աշխատանքային ծրագիրը կարող է հիմք ընդունել նախկինում Հայաստանում կատարված ուսումնասիրությունները՝ ներառելով Երևանում, ինչպես նաև մարզերում, ԵՄ տեղեկատվական կենտրոնների հիմնումը, ԵՄ լուսաբանմանը նվիրված միջոցառումների կազմակերպումը, տեղեկատվական նյութերի պատրաստումը և տարածումը, աջակցությունը գրադարաններին, և այլն: Ակնկալվում է, որ խորհրդատուն կկատարի ԵՄ անդամ երկներում, հնարավոր է նաև ԵՄ անդամակցության թեկնածու կամ ԵՀՔ երկներում, այս ոլոտում առկա լավագույն փորձի և քաղված դասերի վերլուծություն:

- **Գործողություն 3:** ԵՄ խորհրդատվական խմբին «հատուկ» օժանդակության տրամադրում՝ ԵՄ խորհրդատվական խմբի հայցի և ԵՀ պատվիրակության հաստատման հիման վրա:

AEPLAC V-ի աշխատակազմը պետք է պատրաստ լինի արձագանքելու ԵՄ խորհրդատվական խմբի ներկայացրած՝ օժանդակության հնարավոր հայցերին, ինչպիսիք են, օրինակ, փորձագիտական կամ կազմակերպչական օժանդակության ցուցաբերումը միջոցառումների կամ դասընթացների կազմակերպման գործում: Օժանդակությունը կտրամադրվի Հայաստանում ԵՀ պատվիրակության հաստատման հիման վրա:

**Ծրագրի մեկնարկ՝** ապրիլի 1, 2009

**Ծրագրի տևողությունը՝** 24 ամիս

## 2. ԾՐԱԳՐԻ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՓՈՒՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

AEPLAC-ի V փուլի իրականացումը սկսվել է 2009թ. ապրիլի 1-ին՝ պայմանագրի ուժի մեջ մտնելու առաջին աշխատանքային օրը: Այս մասում նկարագրված են ծրագրի մեկնարկային փուլի նախապատրաստական աշխատանքները: Աշխատանքային պլանի մշակման վերաբերյալ մանրամասները շարադրված են 3-րդ բաժնում:

### 2.1 Ծրագրի միջավայրի փոփոխություններ

Ծրագրային առաջարկի ներկայացման և այս զեկույցի պատրաստման միջև ընկած ժամանակահատվածում ծրագրի միջավայրի բովանդակային փոփոխություններ տեղի չեն ունեցել, սակայն այդ ընթացքում տեղի ունեցած որոշ զարգացումներ կարևոր նշանակություն են ունեցել AEPLAC V-ի համար: Այդ զարգացումները շարադրված են ստորև:

#### 2.1.1 ԵՄ Արևելյան Գործընկերության պաշտոնական մեկնարկ

Հիմք ընդունելով 2008թ. դեկտեմբերի Եվրոպական Միության No 823 հաղորդագրությունը՝ 2009թ. մարտի 19-20-ը ԵՄ խորհուրդը ողջունեց Արևելյան գործընկերության մեկնարկը և, Հռչակագրում սահմանված պայմանների հիման վրա, պարտավորվեց զարգացնել առավել խորը երկկողմանի հարաբերություններ ԱԳ պետությունների հետ և ձևավորել բազմակողմանի հարաբերությունների նոր շրջանակ ԵՄ և վեց արևելյան հարևանների միջև: Արևելյան գործընկերության հիմնական նպատակները շարադրված են Պրահայում տեղի ունեցած Արևելյան գործընկերության զագաթնաժողովի համատեղ հռչակագրում (մայիսի 7, 2009թ.), այն է՝ ԵՄ և շահագրգիռ գործընկեր պետությունների միջև ընդլայնել քաղաքական համագործակցությունը և խորացնել տնտեսական ինտեգրումը: Հռչակագիրը նախատեսում է անցում նոր Ասոցիացման համաձայնագրերի այն երկրների հետ, որոնք պատրաստական են և կարող են կատարել դրանից բխող պարտավորությունները: Արևելյան գործընկերության շրջանակներում նորացված համագործակցության կարևոր բաղկացուցիչներից կարող է դառնալ Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի (ԽՀԱԱԽ) ստորագրումը՝ հիմնված ԵՄ օրենքների և ստանդարտների հետ ՀՀ կարգավորող դաշտի համապատասխանեցման, ինչպես նաև քաղաքացիներին ապահով միջավայրում ազատ տեղաշարժի հնարավորություն ընձեռող արտոնագրային ռեժիմի ազատականացման սկզբունքների վրա:

Արևելյան գործընկերության շրջանակը, որն ակնհայտորեն ուժեղացնում է ԵՀԲ-ն, AEPLAC V-ի իրականացումը պայմանավորող առանցքային քաղաքական փաստաթղթերից է:

#### 2.1.2 2009-11թթ. ԵՀԲ գործողությունների ծրագրի իրականացման ապահովմանն ուղղված միջոցառումների ցանկի հաստատում

2009թ. մայիսի 6-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ստորագրեց ՆԿ68Ա կարգադրությունը՝ հաստատելով 2009-11թթ. ԵՀԲ գործողությունների ծրագրի իրականացման ապահովմանն ուղղված միջոցառումների ցանկը: Հրամանը Ազգային անվտանգության խորհրդի համակարգման ներքո գործող միջգերատեսչական հանձնաժողովին լիազորեց համակարգել վերոհիշյալ միջոցառումների ցանկի իրականացման գործընթացը՝ սահմանելով կատարման ընթացքի վերաբերյալ եռամսյակային զեկույցի ներկայացման պահանջ:

197 կետից բաղկացած միջոցառումների ցանկը վկայում է Հայաստանում առկա քաղաքական կամքի մասին և ցուցադրում Հայաստանի իշխանությունների հստակ մոտեցումը ԵՀԲ գործողությունների ծրագրի իրականացմանը: AEPLAC V-ի մեկնարկային փուլը համընկավ լիազոր նախարարությունների և այլ պետական մարմինների կողմից ԵՀԲ ԳԾ-ն իրականացնելու համար գործնական քայլերի նախաձեռնման գործընթացի հետ՝ ի կատարումն Նախագահի կարգադրության:

Տեխնիկական առունով այս գործընթացը AEPLAC-ի համար ավելի պարզ դարձրեց Հայաստանում ծրագրի իրականացման քաղաքականության շրջանակը:

### *2.1.3 Հայաստանում ԵՄ խորհրդատվական խմբի գործունեության մեկնարկ*

AEPLAC V-ի իրավասությունների շրջանակը պահանջում է ծրագրի սերտ համագործակցությունը Հայաստանի Հանրապետությունում ԵՄ խորհրդատվական խմբի (ԵՄ ԽԽ) հետ: ԵՄ ԽԽ-ն իր գործունեությունը սկսել է 2009թ. մարտին՝ քիչ ավելի վաղ, քան AEPLAC-ը: Մեկնարկային փուլում AEPLAC-ի աշխատանքների մեծ մասը՝ աշխատանքային պլանի մշակումը, Հայաստանում շահառուների հետ կապի հաստատումն ու հարցազրույցների անցկացումը, տեղական աշխատակազմի հավաքագրումն ու ծրագրի գրասենյակի վարձակալումը, իրականացվել են ԵՄ խորհրդականների հետ սերտ համագործակցության միջոցով: Այս առումով, AEPLAC-ը և ԵՄ ԽԽ-ը հաջողության են հասել՝ ամուր հիմքեր ստեղծելով ծրագրի իրականացման ընթացքում համատեղ աշխատանքներ իրականացնելու համար (մանրամասները տե՛ս ստորև՝ 3.2-րդ մասում):

### *2.1.4 Հայաստանում ԵՀՔ կատարման ընթացքի վերաբերյալ զեկույց; ԵՀ Առևտրի հարցերով քարտուղարության փաստահավաք առաքելության զեկույց*

2009թ. ապրիլի 26-ին Եվրոպական հանձնաժողովը հրապարակեց ԵՀՔ կատարման ընթացքի վերաբերյալ իր տարեկան զեկույցը, որը ներառում էր նաև զեկույց Հայաստանի գրանցած առաջընթացի վերաբերյալ: Կարևոր է, որ երկրի՝ կատարման ընթացքի վերաբերյալ զեկույցը հատուկ ուշադրություն է դարձնում ԵՀՔ ԳԾ այն ոլորտների վրա, որտեղ անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ բարեփոխումներ և առկա են ինստիտուցիոնալ կարողությունների ակնհայտ բացեր: Վարչապետին առընթեր Եվրախնտեգրման հանձնաժողովն արդեն քննարկել է պետական ռազմավարության համար զեկույցի անմիջական հետևանքները: AEPLAC-ն աշխատանքային խորհրդակցություններ է անցկացրել ծրագրի շահառուների, ԵՀՊ և ԵՄ ԽԽ հետ, որպեսզի զեկույցի եզրակացությունները և վերոհիշյալ 197 միջոցառումների իրականացման վրա դրանց ունեցած ազդեցությունը ինչպես հարկն է արտացոլվեն AEPLAC-ի ընհանուր աշխատանքային պլանում:

2009թ. հունիսի 15-ին ՀՀ իշխանությունները պաշտոնապես ստացան Եվրոպական հանձնաժողովի գնահատումը Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի (ԽՀԱԱՀ) ստորագրման նպատակով ԵՄ-ի հետ Հայաստանի՝ հնարավոր բանակցություններ սկսելուն պատրաստ լինելու վերաբերյալ: Գնահատումը պարունակում էր նաև առաջարկներ ՀՀ իշխանությունների կողմից իրականացվելիք հնարավոր հաջորդ քայլերի վերաբերյալ: Այս գնահատումը կատարվել է Հանձնաժողովի՝ 2009թ. փետրվարին Հայաստան ուղարկած փաստահավաք առաքելության աշխատանքների արդյունքում: Գնահատման զեկույցի մեջ տեղ գտած առաջարկությունների մեծ մասը տեխնիկական բնույթ են կրում, որոնք, սակայն, պահանջում են առևտրի հետ առնչություն ունեցող 11 ոլորտներում գործուն քաղաքականության շրջանակի առկայություն, ինչպես նաև այդ ոլորտներին լուրջ վարչական, ֆինանսական և այլ անհրաժեշտ ռեսուրսների տրամադրում: Առաջարկությունները բաժանված են երկու խմբի՝ «հիմնական գերակայություններ» և «հավելյալ առաջարկություններ»: Առաջին խումբը վերաբերվում է այն ոլորտներին, որտեղ մինչ ԽՀԱԱՊ ստորագրման համար բանակցությունների սկիզբը Հայաստանը պետք է գրանցի պատրաստվածության համապատասխան մակարդակ: Առաջարկությունների երկրորդ խումբը նպատակ ունի նպաստելու ապագայում բանակցային գործընթացի կայացմանը՝ հիմնական շեշտը դնելով համապատասխան պետական մարմինների կարողությունների զարգացման վրա:

«Հիմնական գերակայությունները» վերաբերվում են 11 ոլորտներից 4-ին, որոնք են՝

- նախապատրաստական փուլի և ապագայում հնարավոր բանակցային գործընթացի ընդհանուր համակարգում. այս նպատակով ստեղծել թափանցիկ և արդյունավետ աշխատող կառավարման մարմիններ և զարգացնել դրանց վարչական կարողությունները;
- տեխնիկական կարգավորում. բարելավել օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտը՝ համապատասխանեցնելով ԵՄ ստանդարտներին;

- սանիտարական և ֆիտոսանիտարական միջոցների ապահովում. այստեղ ևս բարելավել օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտը՝ համապատասխանեցնելով ԵՄ ստանդարտներին;
- մտավոր սեփականության իրավունքի ապահովում. բարելավել առկա օրենսդրության կիրարկումը՝ մասնավորապես պայթարը կեղծարարության, անօրինական արտարդության և վաճառքի դեմ:

Ծրագրի գործընկերների՝ մասնավորապես, վարչապետի աշխատակազմի և Էկոնոմիկայի նախարարության, ինչպես նաև ԵՀՊ և ԵՄ ԽՆ ԽԵՄ խորհրդակցությունների արդյունքում AEPLAC-ն իր ընդհանուր աշխատանքային պլանում ներառեց վերոհիշյալ ոլոտներում կարողությունների զարգացման աջակցության ցուցաբերումը:

## 2.2 AEPLAC-ի օժանդակ աշխատակազմի հավաքագրում

AEPLAC-ը օժանդակ փորձագետների թափուր պաշտոնների մասին հայտարարություն է տեղադրել Հայաստանում հայտնի վեբ-կայքում՝ <http://www.careercenter.am/>: Հայտարարված թափուր պաշտոններն էին՝

- Կարողությունների զարգացման գծով փորձագետ (լրիվ դրույթ)
- Ինստիտուցիոնալ զարգացման գծով փորձագետ (իրազեկում; լրիվ դրույթ)
- Ինստիտուցիոնալ զարգացման գծով փորձագետ (կես դրույթ)

Թափուր պաշտոնների համար դիմումներն ընդունվել են 2009թ. ապրիլի 27-ից մինչև մայիսի 7-ը: Ինչպես ցույց է տրված ստորև՝ արդյունքում ստացվել է 103 դիմում:

|   | Ստացված դիմումները | Ընտրված դիմումների ընդհանուր ցուցակ Ընտրություն 1 | Ընտրված դիմումների ընդհանուր ցուցակ Ընտրություն 2 | Ընտրված դիմումների կարճ ցուցակ Ընտրական հարցազրույց | Վերջնական ընտրություն |
|---|--------------------|---|---|---|-----------------------|
| Կարողությունների զարգացման գծով փորձագետ (լրիվ դրույթ)          | 49                 | 9   | 7   | 3   | 1                     |
| Ինստիտուցիոնալ զարգացման գծով փորձագետ (իրազեկում; լրիվ դրույթ) | 18                 | 10  | 5   | 3   | 1                     |
| Ինստիտուցիոնալ զարգացման գծով փորձագետ (իրազեկում; կես դրույթ)  | 36                 | 6   | 4   | 3   | 1                     |
| <b>ԸՆԴՀԱՆՏՆՆԵՐ</b>  | <b>103</b>         | <b>25</b>   | <b>16</b>   | <b>9</b>  | <b>3</b>              |

Դիմումների ընտրության նախնական փուլում 78 դիմում հաշվի չառնվեցին՝ քանզի դրանք ներկայացնողների ինքնակենսագրությունները չէին համապատասխանում թափուր պաշտոնների համար սահմանված պահանջներին: Անհամապատասխանության հիմնական պատճառներն էին կրթության ոչ բավարար մակարդակը, անգլերենի ոչ բավարար իմացությունը, աշխատանքային անբավարար փորձը: Ընտրության երկրորդ փուլում դիմորդների ինքնակենսագրությունները ևս մեկ անգամ մանրամասն ուսումնասիրվեցին և կապ հաստատվեց որոշ դիմորդների հետ՝ ճշգրտելու, որքանով են նրանք հետաքրքրված առաջարկվող աշխատանքով և առաջարկի դեպքում երբ կարող են սկսել աշխատել: Արդյունքում, ևս 9 դիմորդի թեկնածություն մերժվեց: AEPLAC-ը, այնուամենայնիվ, որոշեց պահել այդ դիմորդների տվյալները տվյալների իր բազայում՝ հետագայում հնարավոր համագործակցության նպատակով՝ հատկապես այն դիմորդների հետ, ովքեր բնակվում են Երևանից դուրս (Գյումրիում և Վանաձորում):

Արդյունքում, 9 դիմորդներ հրավիրվեցին հարցազրույցի: Հարցազրույցները տեղի ունեցան մայիսի 15-19-ը: Ընտրվեցին երեք բարձր որակավորում ունեցող փորձագետներ, որոնց թեկնածությունը մայիսի 27-ին հաստատվեց Հայաստանում ԵՀ պատվիրակության կողմից (տե՛ս՝ կից թիվ 3 նամակը):

- Կարողությունների զարգացման գծով փորձագետ (լրիվ դրույք) – Կարեն Հովհաննիսյան
- Ինստիտուցիոնալ զարգացման գծով փորձագետ (իրազեկում; լրիվ դրույք) – Տիգրան Ճորոխյան
- Ինստիտուցիոնալ զարգացման գծով փորձագետ (կես դրույք) – Սերգեյ Վարդանյան

AEPLAC-ի աշխատակազմը իր զգալի ներդրումն ունեցավ մեկնարկային փուլում աշխատանքների իրականացման, ընդհանուր աշխատանքային և կարողությունների զարգացման պլանների կազմման, ԵՄ ինտեգրման գործընթացի համակարգման գործում դերակատարում ունեցող ՀՀ հանրային կառավարման մարմինների վերաբերյալ վերլուծության պատրաստման և լուսաբանման աշխատանքային ծրագրի մշակման գործում: Դեկավար հանձնաժողովի կողմից աշխատանքային պլանի հաստատումից հետո կշարունակվի ծրագրի պլանավորված գործողությունների իրականացման համար անհրաժեշտ նոր աշխատակիցների հավաքագրման գործընթացը:

### 2.3 Ծրագրի գրասենյակի վարձակալումը, վեբ-կայքի պատրաստում

AEPLAC V-րդ փուլի գրասենյակը գտնվում է Էրեբունի Պլազա բիզնես կենտրոնում՝ ԵՄ խորհրդատվական խմբի և ծրագրի գործընկեր հանդիսացող՝ ՀՀ հանրային կառավարման մարմինների անմիջական հարևանությամբ: Գրասենյակի գնտվելու վայրն ընտրվել է ապահովելու լավագույն պայմանները վերոհիշյալ գործընկեր կառույցների հետ համագործակցության համար: Կահույքի և գույքի շատ պարագաներ վերցվել են նախորդ AEPLAC-ի գրասենյակներից, որոնց համար կազմվել է նոր համապատասխան գույքացուցակ: Որոշ պարագաներ՝ ինչպիսիք են համակարգիչները և էլեկտրոնային այլ պարագաները, գնվել են հատուկ V-րդ փուլի իրականացման համար:

Հաշվետու ժամանակահատվածում AEPLAC-ը նախաձեռնել է ծրագրի վեբ-կայքի՝ [www.aeplac.eu-h](http://www.aeplac.eu-h) նորացումը, որի հիմնական նպատակներ են՝

- ապահովել ծրագրի լուսաբանման շարունակականությունը՝ մատչելի պահելով AEPLAC –ի տասնամյա գործունեության արդյունքում ստեղծված նյութերի և տվյալների բազաների էլեկտրոնային տարբերակները;
- ներկայացնել ծրագրի V-րդ փուլի նորարանությունները՝ մասնավորապես ծրագրի աշխատանքների նոր շեշտադրումները և համակարգված աշխատանքը ԵՄ խորհրդատվական խմբի ու Հայաստանին տրամադրվող ԵՄ աջակցության այլ ծրագրերի հետ:

Վեբ-կայքի պատրաստման մոտեցումները քննարկվել են հատուկ հանդիպման ժամանակ, որին մասնակցել են ԵՀՊ, ԵՄ ԽԽ, ԵՄ կողմից ֆինանսավորվող՝ Հայաստանում Twinning and TAIEX գործիքների գործառնությանն աջակցության ծրագրի ներկայացուցիչները: Արդյունքում որոշվել է համակարգել էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով երեք ծրագրերի ներկայացման գործընթացը՝ միմյանց աշխատանքների վերաբերյալ հղումներ տեղադրելու և, որքան հնարավոր է, միանման և/կամ արագ վերափոխելի վեբ-կայքերի մշակման միջոցով: Այս առնչությամբ, պետք է հստակեցվեն նաև ներկայացվող նյութերի նկատմամբ կողմերի ունեցած իրավասության հարցերը:

AEPLAC-ը սկսել է վեբ-կայքի պատրաստման գործընթացը հունիսի վերջին և վերոհիշյալ նպատակներին համապատասխան՝ ակնկալում է ներկայացնել նոր վեբ-կայքը 2009թ. հուլիսին:

### 2.4 Հիմնական խնդիրները և բացեր

Ընդհանուր առմամբ, ծրագրի մեկնարկային փուլը հարթ ընթացք է ունեցել և 2.1. մասում ներկայացված նոր պայմաններում անհրաժեշտ դիրք է ապահովել AEPLAC V-ի համար: Շահագրգիռ կառույցների հետ աշխատանքային հանդիպումների ընթացքում (տե՛ս Հանդիպումների ցուցակը Հավելված 4-ում) աշխատակազմի անդամները մշտապես ընդգծել են V-րդ փուլում AEPLAC-ի նոր դերը և բացատրել ԵՄ խորհրդատվական խմբի հետ համագործակցային հարաբերությունների բնույթը: Սա հատկապես անհրաժեշտ էր ծրագրի համագործակից կառույցների՝ հիմնականում

լիազոր նախարարությունների մոտ, AEPLAC-ի նախորդ փուլերի հետ հարաբերությունների արդյունքում արդեն ձևավորված ակնկալիքների տեսանկյունից: Ծրագրի աշխատակազմն այս ընթացքում օգտվում էր ԵՀՊ աջակցությունից և ԵՄ խորհրդակցանների հետ համագործակցության ու համատեղ գործողություններ իրականացնելու հնարավորությունից: Այդ մոտեցումը հնարավորություն տվեց հասնելու մեկնարկային փուլի արդյունքներին շահագրգիռ կառույցներից մեծ մասի՝ ներառյալ վարչապետի աշխատակազմի և Էկոնոմիկայի նախարարության հետ, որոնք, սակայն, պետք է զարգացվեն ծրագրի իրականացման հիմնական փուլում համապատասխան միջոցառումների միջոցով:

## 2.5 Արդյունքներ

AEPLAC-ի կողմից պատրաստվել և ծրագրի գործընկերներին են ներկայացվել մեկնարկային փուլի հետևյալ արդյունքները՝

- Կարողությունների զարգացման կարիքների գնահատումը (ԿԶԿԳ) և Կարողությունների զարգացման պլանը (ԿԶՊ);
- Հարցախույզի պատասխանների գնահատումը և Էկոնոմիկայի նախարարության կարողությունների զարգացման կարիքների գնահատումը;
- Կարճաժամկետ փորձագետի զեկույցը, որը մատնանշում է Հայաստանի եվրաինտեգրման տեղեկատվական և հաղորդակցական ռազմավարության հիմնական բաղադրիչները;
- ԵՄ ինտեգրման գործընթացի համակարգման գործում դերակատարում ունեցող ՀՀ հանրային կառավարման մարմինների վերաբերյալ վերլուծությունը;
- AEPLAC-ի ընդհանուր աշխատանքային պլանը;
- Մեկնարկային զեկույցը:

ԿԶՊ-ն և ընդհանուր աշխատանքային պլանը հիմնված են ԵՄ խորհրդատվական խմբի կողմից պլանավորված աշխատանքների վրա և կարող են դիտարկվել որպես հետագա համագործակցության գործիքներ:

Ծրագրի աշխատակազմը սկսել է նաև մշակել 2009թ. հուլիս – սեպտեմբեր ամիսների կարողությունների զարգացման միջոցառումների ծրագրերը:

## 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Այս բաժինը ներկայացնում է ծրագրի իրականացման հիմնական փուլում AEPLAC V-ի աշխատանքների տրամաբանությունը և ակնկալվող արդյունքները: Այն պետք է դիտարկվի 2-րդ բաժնում նկարագրված աշխատանքների լույսի ներքո՝ որպես տեխնիկական առաջարկի և Իրավասությունների շրջանակի մշակում: Այս բաժնում անդրադարձ է կատարված նաև ծրագրի գործընկերների և շահառուների (տես ցանկը Հավելված 4-ում) հետ ունեցած հանդիպումներին, որոնք հնարավորություն տվեցին փորձագետներին առավել լավ պատկերացում կազմել երկրի համատեքստի, հանրային կառավարման մարմինների ունեցած հատուկ կարիքների և պահանջների վերաբերյալ: Հանդիպումների արդյունքում պարզված իրողությունները, ինչպես նաև դրանց ազդեցությունը ծրագրի հիմնական աշխատանքների վրա արտացոլված են ստորև:

### 3.1. Ծրագրի ցանց

AEPLAC V-ը գործում է մի մեծ ցանցի շրջանակում, որը ներառում է Հայաստանի հանրային կառավարման մարմինները, Հայաստանում ԵՄ խորհրդատվական խումբը, ԵՄ և միջազգային դոնորների կողմից ֆինանսավորվող այլ ծրագրերը ներկայացնող գործընկերներ և շահառուներ, ինչպես նաև քաղաքացիական հասարակությունը ներկայացնող հասարակական կազմակերպությունների, ակադեմիական և բիզնես համայնքների (վերջիններս՝ այնքանով, որքանով կարողությունների զարգացումը վերաբերվում է ԵՀԶ ԳՊ-ով նախատեսված՝ գործարար միջավայրի

բարելավմանը) ներկայացուցիչներ: Երևանից դուրս պլանավորված տեղեկատվական և լուսաբանման աշխատանքների համատեքստում մարզային մակարդակում աշխատանքը AEPLAC-ի ցանցի կարևոր բաղկացուցից մասն է:

### 3.1.1 Ծրագրի գործընկեր

AEPLAC-ն աշխատանքային կապեր է հաստատել ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար պարոն Դավիթ Սարգսյանի հետ, ում հետ քննարկվել են AEPLAC-ի V-րդ փուլի աշխատանքների մեթոդաբանության, ԵՄ խորհրդատվական խմբի հետ համագործակցության, ապա նաև AEPLAC-ի աշխատանքային պլանի նախագծի մանրամասները: Աշխատանքային պլանի վերաբերյալ ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները հաշվի են առնվել ԱՊ-ի վերջնական տարբերակը մշակելիս (տե՛ս Հավելված 1): AEPLAC-ը հավատացած է, որ ծրագրի իրականացման հիմնական փուլի համար լավ հարաբերությունների հիմք է դրել՝ ստանալով Կարչապետի աշխատակազմի հավանությունը աշխատանքային պլանում ամրագրված՝ այլ շահառուների հետ ծրագրի աշխատանքների իրականացման համար:

Միաժամանակ, Կառավարության աշխատակազմը, AEPLAC-ի կարողությունների զարգացման այն միջոցառումների անմիջական շահառուն է, որոնք վերաբերում են ԵՀՔ ԳՊ-ում տեղ գտած քաղաքացիական ծառայության համակարգի բարեփոխման և արդյունավետ կառավարման ոլորտներին: Այս ոլորտներում ԵՄ ԽԽ-ն առաջնային դեր կունենա:

### 3.1.2 Ծրագրի շահառուներ

Սեկնարկային փուլում շահառուների հետ AEPLAC-ի աշխատանքները նպատակ ունենին պարզելու նրանց ներգրավվածության մակարդակը ԵՀՔ ԳՊ իրականացման գործընթացում և գնահատելու նրանց վերապատրաստման կարիքները: Արդյունքում հետևյալ պետական մարմիններն ընտրվեցին հետագայում AEPLAC-ի աջակցությունից օգտվելու համար.

- **Էկոնոմիկայի նախարարությունը**, որը հանդես է գալիս որպես՝ (ա) ԵՀՔ ԳՊ իրականացման և ԽՀԱԱՊ բանակցությունների նախապատրաստման համակարգող մարմին և (բ) ԵՀՔ ԳՊ և ԽՀԱԱՊ որոշ մասերի իրականացնող մարմին: Հաշվի առնելով Էկոնոմիկայի նախարարության առանցքային դերը, AEPLAC-ը ԵՄ ԽԽ-ի հետ համատեղ նախարարության վարչությունների և առընթեր կառույցների (ինչպիսիք են Ստանդարտների ազգային ինստիտուտը և Ստավոր սեփականության գործակալությունը) կարողությունների զարգացման կարիքների գնահատում կատարեց: Վերոհիշյալ մարմինները ծրագրի շահառուները կլինեն ծրագրի իրականացման հիմնական փուլում:
- **Ազգային անվտանգության խորհուրդը** և դրա համակարգման ներքո գործող աշխատանքային խմբի անդամները, ում հետ աշխատանքներ կիրականացվեն Հայաստանի եվրախնտեզրման տեղեկատվական և հաղորդակցական ռազմավարության մշակման շրջանակներում:
- **Գյուղատնտեսության նախարարությունը և Առողջապահության նախարարությունը**, որոնց հետ աշխատանքներ կիրականացվեն առևտրի սանիտարական և ֆիտոսանիտարական միջոցների ապահովման շրջանակներում:
- **Ֆինանսների նախարարությունը**, որի հետ աշխատանքները միտված կլինեն մակրոտնտեսական քաղաքականության մշակման և իրականացման ուղղությամբ կարողությունների զարգացմանը, ինչպես նաև աշխատանքներ կիրականացվեն այն հարցերի շուրջ, որոնց ուղղությամբ աշխատում է ԵՄ ԽԽ-ն:
- **Քաղաքացիական ծառայության խորհուրդը** և պետական լիազոր այլ մարմինները, որոնց հետ, ԵՄ ԽԽ ղեկավարությամբ, աշխատանքներ կիրականացվեն քաղաքացիական ծառայության և կառավարման բարեփոխումների շրջանակներում:
- **Արտաքին գործերի նախարարությունը**, որին ԵՄ ԽԽ հետ միասին աջակցություն

կցուցաբերվի Դիվանագիտական ակադեմիայի ստեղծման գործում:

- **Տարածքային կառավարման նախարարությունը, Միգրացիոն գործակալությունը** և այլ լիազոր պետական մարմինները, որոնց համար կկազմակերպվեն դասընթացներ ԵՄ հետ ապագայում հնարավոր արտոնագրային ռեժիմի պարզեցման համաձայնագրի վերաբերյալ (այս աջակցությունը, սակայն, կհետաձգվի մինչև համապատասխան քաղաքական գործընթացի մեկնարկը):
- **Տարածքային կառավարման մարմինները (մարզպետարանները)**, որոնց հետ աշխատանքներ կիրականացվեն լուսաբանման միջոցառումների շրջանակներում: Մեկնարկային փուլում կապ է հաստատվել Լոռու մարզպետի տեղակալ պարոն Արսեն Դարբինյանի և Լոռու մարզպետի խորհրդական պարոն Ասլանյանի հետ:

Վերոհիշյալ ցուցակն ամբողջական չէ: AEPLAC-ը ճկունություն կցուցաբերի՝ ծրագրի շահառուների շարքում ներառելու հանրային կառավարման այլ մարմինների, որոնք ներգրավված են ԵՀՔ ԳԾ և ԽՀԱԱՀ իրականացման գործընթացում:

### 3.1.3 Այլ շահագրգիռ կառույցները

Այլ շահագրգիռ կառույցներն են ՀԿ-ների, ակադեմիական և քիզնես համայնքների ներկայացուցիչները, որոնց հետ AEPLAC-ը նախատեսում է համակարգել և՛ իր կարողությունների զարգացման, և՛ ԵՄ լուսաբանման աշխատանքները: Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը (ՄՋՄԿ), որը AEPLAC-ի կոնսորցիումի անդամ է, AEPLAC-ի առանցքային գործընկերն է իրազեկման և ցանցային աշխատանքների ոլորտում: AEPLAC-ին ՄՋՄԿ աջակցությունը կարող է ներառել քաղաքացիական հասարակության շրջանում նոր գործընկերների ներկայացումը, դասընթացներ անցնելու և դասընթացավար դառնալու նպատակով թեկնածուների ընտրությունը, Երևանից դուրս կապերի ապահովումը, և այլն:

Մեկնարկային փուլում AEPLAC-ը կապ է հաստատել մի շարք հԿ-ների հետ, որոնցից են Հայաստանի եվրոպական շարժում, Եվրոպական ինստեգրում, Երևանի մամուլի ակումբ, Սոցիալական, իրավական և տնտեսական բարեփոխումների կենտրոն (Վանաձոր), Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտ (Վանաձոր), Հելսինկիի քաղաքացիական ասամբլեա (կենտրոնական գրասենյակը և Վանաձորի մասնաճյուղը) ՀԿ-ները և Friedrich-Ebert-Stiftung հիմնադրամի Հայաստանյան գրասենյակը: Ծրագրի աշխատանքային պլանի իրականացման ընթացքում այլ շահագրգիռ կառույցների ցանցը կընդլայնվի:

### 3.2. ԵՄ խորհրդատվական խմբի հետ ծրագրի գերակայությունների սահմանում

AEPLAC-ի աշխատանքային պլանը՝ մասնավորապես կարողությունների զարգացման պլանը (ԿՋՊ) ներառում է բոլոր այն ոլորտները, որտեղ ակտիվ գործունեություն են ծավալում ԵՄ խորհրդականները: Միասնական մոտեցումների և խորհրդատվական խմբի հետ մշակված աշխատանքների մանրամասն նկարագրության համար տե՛ս Կարողությունների զարգացման կարիքների գնահատումը (ԿՋ ԿԳ, Հավելված 3):

AEPLAC-ի և ԵՄ ԽԽ միջև համակարգում իրականացվում է ԽԽ ղեկավարների և խորհրդականների հետ շաբաթական կամ ավելի հաճախ տեղի ունեցող հանդիպումների, որոնց մասնակցում են նաև Երևանում ԵՀ պատվիրակության ներկայացուցիչները, տեղեկատվության փոխանակման, Հայաստանյան գործընկերների հետ համատեղ հանդիպումների ու քննարկումների, համաձայնեցված տեղեկատվական և լուսաբանման միջոցառումների միջոցով: Սա նաև դրական ազդեցություն է ունենում հիմնական շահառուների՝ հանրային կառավարման մարմինների և ընդհանուր հասարակության շրջանում Հայաստանին ԵՄ տրամադրած աջակցության ընկալման վրա:

AEPLAC-ը և ԵՄ ԽԽ քննարկել են հավելյալ ռեսուրսների կարիք ունեցող խորհրդատվության և կարողությունների զարգացման ոլորտները՝ փոխադարձ օգնության և համագործակցային հարաբերությունների տեսանկյունից: Նման ոլորտներներից են, օրինակ, առևտրի տեխնիկական

խոչընդոտների (USF) հաղթահարումը և սանիտարական ու ֆիտոսանիտարական (ՍՖՍ) միջոցների ապահովումը, որտեղ, ըստ ԵՀ առևտրի հարցերով քարտուղարության փաստահավաք առաքելության, լուրջ բարեփոխումների անհրաժեշտություն կա: Միայն կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքները, սակայն, անհրաժեշտ արդյունք չեն ունենա, եթե հիմնված չլինեն ռազմավարական և օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ ԵՄ ԽՆ կողմից տրամադրվող ծանրակշիռ խորհրդատվության վրա:

### 3.3 Համակարգում այլ ծրագրերի հետ

Խորհրդատվական խմբից բացի, AEPLAC-ի առանցքային գործընկերներն էլ ԵՄ կողմից ֆինանսավորվող Հայաստանում Twinning and TAIEX գործիքների գործառնությանն աջակցության (ՀՏՏԳԳՍ/SATTO) ծրագիրը, որն աջակցություն է ցուցաբերում Էկոնոմիկայի նախարարության Ծրագրերի կառավարման գործակալությանը (ԾԿԳ): SATTO-ն, որի հետ մեկնարկային փուլում սերտ համագործակցային հարաբերություններ են հաստատվել, իր գործունեությունը սկսել է AEPLAC-ից մեկ ամիս առաջ: SATTO-ի հետ հարաբերությունների տրամաբանությունը բխում է այն հանգամանքից, որ AEPLAC-ը, ինչպես նաև ԵՄ ԽՆ-ն, իրավասու են հայաստանյան շահառուներին առաջարկություններ ներկայացնել այն ոլորտների վերաբերյալ, որտեղ կարող են կիրառվել Հայաստանում հասանելի ԵՄ գործիքները (Twinning, TAIEX, SIGMA, CBC): Այդ իսկ պատճառով, AEPLAC-ը քննարկել և համաձայնության է եկել համակարգված մոտեցման կիրառման շուրջ SATTO-ի ղեկավար Պատրիկ Սադինի և ղեկավարի տեղակալ Կորյուն Դանիելյանի հետ՝ համաձայնեցնելու կողմերի աշխատանքները և ապահովելու հայաստանյան շահառուներին համապարփակ աջակցության տրամադրումը՝ կապված ԵՄ վերոհիշյալ գործիքների կիրառման հետ:

AEPLAC-ի համագործակցության ցանցի շրջանակում ընդգրկված մյուս կարևոր ծրագրերը ֆինանսավորվում են SIGMA-ի միջոցով, որը ԵՄ և Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ) համատեղ գործիքն է: AEPLAC-ը կապ է հաստատել SIGMA-ի այն փորձագետների հետ, ովքեր աշխատում են Ֆինանսների նախարարության հետ՝ հանրային ներքին ֆինանսական վերհսկողության և հանրային գնումների հարցերի շուրջ, ինչպես նաև Քաղաքացիական ծառայության խորհրդի հետ՝ քաղաքացիական ծառայության բարեփոխման շուրջ: Հանդիպումների նպատակն էր կարողությունների զարգացման միջոցառումները պլանավորելիս SIGMA-ի գործունեությանը մասին տեղյակ լինելը:

Մեկնարկային փուլում հաշվի են առնվել այլ դոնորների (նաև երկկողմանի) ներկայիս և ծրագրված աշխատանքները՝ հետագայում համագործակցելու և կրկնություններից խուսափելու նպատակով: Օրինակ կարող է հանդիսանալ մետրոլոգիայի ոլորտում ծրագրված գերմանական աջակցությունը (առաքելության մեկնարկն ակնկալվում է հուլիսի կեսերին), որի շրջանակներում AEPLAC-ը կփորձի համագործակցային հարաբերություններ հաստատել և համաձայնեցնել իր կողմից իրականացվող աշխատանքները:

### 3.4 Խոչընդոտներ, ռիսկեր և ենթադրությունները

AEPLAC-ի մոտեցման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, թե որքանով են ծրագրի գործընկերները պատրաստակամ/կարող հետևելու ԵՄ ԽՆ-ի կողմից ներկայացված խորհուրդներին, որին պետք է համապատասխանաբար հետևի AEPLAC-ի աջակցությունը կարողությունների զարգացման գործում: Պատճառները, որոնք կարող են սահմանափակել գործընկերների պատրաստակամությունը/կարողությունը բազմազան են և կարող են ներառել, օրինակ՝

- ռազմավարությունների անհամապատասխանությունները, օրինակ՝ ԵՄ հետ և ԱԳՀ ներսում ազատ առևտրի վերաբերյալ բանակցությունների զուգահեռ նախապատրաստական աշխատանքների իրականացումը;
- ռեսուրսների անհամապատասխանությունը, որի հիմնական պատճառ է հաճախ հանդիսանում ծախսերի սխալ հաշվարկը, օրինակ՝ պետական բյուջեից բավարար

Ֆինանսավորման բացակայությունը ֆինանսական կարգավորման դաշտի համապատասխանեցման և ԵՀՔ ԳԾ-ից բխող այլ միջոցառումների իրականացման համար;

- հանրային կառավարման համակարգի հետ կապված խոչընդոտները՝ թերի համակարգումը և գործառույթների կրկնօրինակումը, հանրային կառավարման մարմիններում կադրերի հոսունությունը, և այլն:

Ի լրումն տեխնիկական առաջարկում նշված տարբերակների՝ այս ռիսկերը հաղթահարելու ուղիները ներառում են այնպիսի միջոցներ, ինչպիսիք են քաղաքականության շրջանակի հիմնարար վերլուծությունը և քննարկումները ԵՄ ԽՆ, ԵՀՊ, SATTO-ի, հկ-ների և, ամենից կարևորը, հանրային կառավարման մարմինների գործընկերների հետ՝ աստիճանաբար վստահություն ձեռք բերելու նպատակով:

### 3.5 Ամբողջ ծրագրի պլանավորում

Ստորև շարադրված ենթաբաժինները ներկայացնում են իրականացման փուլում՝ 2009թ հուլիսից մինչև 2011թ. մարտը, AEPLAC-ի գործունեության երեք տիպերը: Ծրագրի ռեսուրսները նկարագրված աշխատանքների միջև կբաշխվեն մոտավորապես 70-20-10 համամասնությամբ:

#### 3.5.1 Կարողությունների զարգացում

Մեկնարկային փուլում AEPLAC-ն անց է կացրել կարողությունների զարգացման կարիքների մանրակրկիտ գնահատում՝ սահմանելով կարողությունների զարգացման իր ծրագրի հիմնական գերակայությունները և մշակելով կարողությունների զարգացման պլան ծրագրի իրականացման հիմնական փուլի համար: Կարողությունների զարգացման կարիքների գնահատման արդյունքները, աջակցության գերակա ոլորտները, ինչպես նաև կարողությունների զարգացման պլանի գործողությունները զետեղված են Հավելվածներ 2-ում և 3-ում:

Այս աշխատանքի տեղեկատվության աղբյուրները և մեթոդները ներառում են քաղաքականության շրջանակի վերլուծությունը, շահառուների հետ հարցազրույցները, որոնք արձանագրվել են և պահվում են ծրագրի արխիվում, վարչապետի աշխատակազմի, Էկոնոմիկայի նախարարության, ԵՄ ԽՆ-ի և ԵՀ պատվիրակության հետ ունեցած աշխատանքային քննարկումները մի քանի նախագծերի վերաբերյալ: Այդ քննարկումների շարքում հարկ է առանձնացնել ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ պրն. Վիգեն Սարգսյանի, ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար պրն. Դավիթ Սարգսյանի, ՀՀ Էկոնոմիկայի նախարար պրն. Ներսես Երիցյանի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ պրն. Արմեն Ալավերդյանի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումները:

2009թ. հուլիսից սկսած AEPLAC-ը նախատեսում է երեք ամիսը մեկ անգամ ԿԶՊ իրականացման կանոնավոր գնահատում կատարել իր գործընկերների՝ ԵՄ ԽՆ և ԵՀՊ հետ: Գնահատման հիման վրա համապատասխան փոփոխություններ կկատարվեն աշխատանքային պլանում, որոնք կհամապատասխանեցվեն նաև ծրագրի միջանկյալ զեկույցների հետ:

#### 3.5.2 ԵՄ լուսարանում Երևանում և մարզերում

Վերոնշյալի համաձայն AEPLAC-ը ներգրավվել է Ազգային անվտանգության խորհրդի համակարգման ներքո գործող աշխատանքային խմբի գործունեության մեջ, որի առջև խնդիր է դրված մշակել Հայաստանի եվրաինտեգրման տեղեկատվական և հաղորդակցական ռազմավարությունը: Աշխատանքային խմբի առաջին հանդիպումը տեղի ունեցավ ս.թ. հունիսի 15-ին, որտեղ, ի թիվս այլ աշխատանքների, կազմվեց խմբի գործունեության ժամանակացույցը: AEPLAC-ը, ըստ հաստատված ժամանակացույցի, ինչպես նաև կարճաժամկետ փորձագետ Հաննես Ռումմի առաքելության եզրակացությունների, կիրականացնի հետևյալ գործողությունները:

1. ԵՄ վերաբերյալ ներկայացուցչական **հանրային իրազեկման հետազոտություն** և **Հայաստանի եվրախնտեզրման տեղեկատվական և հաղորդակցական ռազմավարության կմախքի** մշակում.

AEPLAC-ը կաջակցի Հայաստանի հանրային կառավարման մարմիններին՝ 2009թ. օգոստոսից-սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում Երևանի բնակիչների շրջանում հանրային իրազեկման ներկայացուցչական հետազոտություն իրականացնելով: Հետազոտությունը կպարզի եվրոպական ինտեգրման վերաբերյալ հանրության տեղեկացվածության մակարդակը, կներկայացնի գործընթացի հետ կապված մարդկանց մտավախություններն ու ակնկալիքները և կմատնանշի նրանց տեղեկատվական կարիքները: Հետազոտության արդյունքների հիման վրա աշխատանքային խումբը կմշակի արդյունավետ հաղորդակցական ռազմավարություն, որին AEPLAC-ն իր նպաստը կբերի՝ նախագծելով դրա կառուցվածքը:

Հետազոտությունը կիրականացվի՝ հաշվի առնելով առկա փորձը և մասնավորապես՝ ՀՀ ԱԳՆ պատվերով AEPLAC IV-ի կողմից իրականացված նույնատեսակ հետազոտության արդյունքները: Մեկնարկային փուլում հնարավոր չեղավ տիրապետել վերջինիս բովանդակությանն ու արդյունքներին, այնուամենայնիվ, AEPLAC-ն իրազեկ է նաև 2007թ. մշակված, սակայն երբևէ պաշտոնապես չվավերացված մեկ այլ փաստաթղթի՝ Հայաստանի եվրախնտեզրման հաղորդակցման ռազմավարության նախագծի առկայության մասին: Հետագա աշխատանքի ընթացքում դրանց հղում կկատարվի: Նոր ռազմավարության կարևոր բաղկացուցիչ է հանդիսանալու ծախսերի իրատեսական նախահաշվարկն ու ֆինանսների հայթայթման պլանը՝ ներառյալ պետական բյուջեից հատկացվելիք ֆինանսական ռեսուրսների հավաստի հաշվարկը:

Հավելումն, և՛ Հայաստանի հանրային կառավարման մարմինները, և՛ Եվրոպական հանձնաժողովի պատվիրակությունը հնարավորություն կստանան իրականացնել առավել արդյունավետ տեղեկատվական քարոզարշավներ՝ հիմնվելով Հայաստանի հանրության տեղեկատվական իրական կարիքների վրա:

2. ԵՄ և եվրախնտեզրման վերաբերյալ **սեմինարներ պատմության և/կամ սոցիալական ուսմունքների ուսուցիչների համար**

AEPLAC-ը նախատեսում է վարել փորձնական սեմինար Երևանի դպրոցների պատմության և/կամ սոցիալական ուսմունքների ուսուցիչների համար: Վերջիններիս համար կմշակվեն վերապատրաստման նյութեր ԵՄ և եվրախնտեզրման վերաբերյալ, որոնց հիման վրա կիրականացվի մասնագիտական վերապատրաստման դասընթաց: Դասընթացը կհզորացնի ուսուցիչների ներուժը՝ տրամադրվող կրթական նյութերի օգնությամբ դպրոցներում կազմակերպելու դասընթացներ՝ նվիրված ԵՄ և եվրախնտեզրման գործընթացին: Փորձնական դասընթացի հաջողության դեպքում AEPLAC-ը ողջ մեթոդաբանությունը կփոխանցի ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ այն դպրոցական պաշտոնական դասացուցակում ներառելու նպատակով:

3. Կրթական **սեմինարներ հայկական ընկերությունների համար**, որոնք, ըստ ամենայնի, կկրեն ԽՀԱԱՀ և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի (ԽՀԱԱՀ) ազդեցությունը.

ԽՀԱԱՀ գործընթացն ակնհայտորեն կներգործի ԵՄ շուկայում ընդգրկված կամ նման հավակնություններ ունեցող հայկական ընկերությունների վրա: AEPLAC-ը նախատեսում է համագործակցել բիզնես կազմակերպությունների 2-3 ամենաներկայացուցչական միությունների հետ՝ ԽՀԱԱՀ ազդեցության վերաբերյալ հատուկ սեմինարներ կազմակերպելու համար: Վերջինիս նպատակը բիզնես առաջնորդների ուշադրության հրավիրումն է ինչպես մի շարք հավանական քայլերի վրա, որոնք Կառավարությունը պետք է ձեռնարկի ԵՄ հետ ԽՀԱԱՀ շուրջ բանակցելու համար, այնպես էլ դրական ու բացասական հետևանքների վրա, որոնց առջև կարող են կանգնել հայկական ընկերությունները հետագայում: Սեմինարի շնորհիվ հայկական ընկերությունները իրազեկ կդառնան ԽՀԱԱՀ

մարտահրավերների և հնարավորությունների մասին՝ այդպիսով ապահովելով բիզնես համայնքի աջակցությունը եվրոպական ինտեգրման գործընթացին:

4. ԵՄ և եվրաինտեգրման վերաբերյալ **վերապատրաստման դասընթաց լրագրողների** համար.

Ներկայումս Հայաստանում ԵՀ պատվիրակությունը սերտորեն համագործակցում է մի շարք հայտնի Հայաստանյան լրագրողների հետ, ովքեր ազատ տիրապետում են անգլերենին: Սակայն, մյուս կողմից, հաշվի առնելով այս լրագրողների սահմանափակ թիվը՝ AEPLAC-ը անհրաժեշտ է համարում հավելյալ դասընթացի կազմակերպումը լրագրողների առավել լայն շրջանակի համար՝ գլխավորապես ԵՀՔ և ԱԳ շնորհիվ բացվող նոր հորիզոնների վերաբերյալ: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ լրագրողները հանդիսանում են տեղեկատվության տարածման ամենաազդեցիկ դերակատարները, AEPLAC-ը կձգտի ընդլայնել ԵՄ-ին իրազեկ լրագրողների ցանցը Հայաստանում:

5. **Դասընթացներ հասարակական կազմակերպությունների** համար

Հայաստանյան հկ-ների ներկայացուցիչների հետ հանդիպումները ի հայտ բերեցին հկ-ների թերի տեղեկացվածությունն ու անլիարժեք փորձը ԵՄ ֆինանսական հնարավորությունների և դրանցից օգտվելու մասին: AEPLAC-ը կկազմակերպի դասընթացներ Հայաստանյան հկ-ների համար՝ ներկայացնելով ԵՄ սահմանած իրավական շրջանակն ու պրակտիկան հկ-ների համար: Սեմինարները կընդգրկեն պրակտիկ դասընթացներ ԵՄ կողմից հայտարարվող դրամաշնորհներին դիմելու ընթացակարգերի և ծրագրի առաջարկների կազմման վերաբերյալ:

Հայաստանի եվրաինտեգրման տեղեկատվական և հաղորդակցական ռազմավարության հետ կապված առաջընթացով, ինչպես նաև ՀՀ ԱԱԽ, ԵՄ ԽԽ և ԵՀՊ հետ համագործակցությամբ պայմանավորված՝ AEPLAC-ը կներկայացնի 2009թ. օգոստոս-նոյեմբեր ժամանակահատվածի համար նախատեսված տեղեկատվական աշխատանքային ժամանակացույց: Հատուկ շեշտադրում կարվի մարզերում իրականացվող միջոցառումների վրա, իսկ Երևանում նախատեսվող քարոզարշավները կիրականացվեն ԵՀՊ և ԵՄ ԽԽ հետ անմիջական համագործակցության արդյունքում:

*3.5.3 Նախօրոք չայլանավորված գործողություններ*

AEPLAC-ի հատուկ միջամտությունները քննարկվել են ծրագրի շահառուների, ԵՄ ԽԽ և ԵՀՊ հետ: AEPLAC-ի գործընկերները հավանություն տվեցին այն մտեցմանը, որ դրանք հիմնականում ներառեն ԵՀՔ և ԽՀԱԱՀ գերակայությունների վերաբերյալ ուսումնասիրությունների կատարումը, որոնք անհրաժեշտ կլինեն որոշելու աջակցության տրամադրման առավել արդյունավետ ուղիները: Մեկ հնարավոր գործողության վերաբերյալ արդեն համաձայնություն է ձեռք բերվել, այն է՝ ԵՄ Հայաստանի արտահանման առկա ծավալի և արտահանման պոտենցիալի վերաբերյալ հետազոտությունը՝ պարզելու այն արդյունաբերական արտադրանքները, որոնց համար անհրաժեշտ է կարգավորման դաշտի համաձայնեցում կատարել:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

**ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ**

|               |   |
|---------------|---|
| ԱՊՀ           | Անկախ պետությունների համագործակցություն   |
| ԳՀՀ           | Գործընկերության և համագործակցության համաձայնագիր Հայաստանի և Եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև |
| ԵԻ            | Եվրաինտեգրում   |
| ԵԳ            | Եվրոպական գործընկերություն  |
| ԵՀ            | Եվրոպական հանձնաժողով   |
| ԵՀՊ           | Եվրոպական հանձնաժողովի պատվիրակություն  |
| ԵՀՔ           | Եվրոպական հարևանության քաղաքականություն   |
| ԵՀՔ ԳԾ        | Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագիր   |
| ԵՄ            | Եվրոպական Միություն   |
| ԽՀԱԱՀ         | Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր  |
| ԾԿԳ           | Ծրագրերի կառավարման գործակալություն   |
| ԿԶ            | Կարողությունների զարգացում  |
| ԿԶ ԿԳ         | Կարողությունների զարգացման կարիքների գնահատում  |
| ԿԶՊ           | Կարողությունների զարգացման պլան   |
| ՀԱԱԽ          | Հայաստանի ազգային անվտանգության խորհուրդ  |
| ՀԿ            | Հայաստանի կառավարություն  |
| հկ            | հասարակական կազմակերպություն  |
| ՀԿԲ           | Հայաստանի կենտրոնական բանկ  |
| ՀՍԱԻ          | Հայաստանի ստանդարտների ազգային ինստիտուտ  |
| ՀՏՏԳԱԾ/ SATTO | Հայաստանում Twinning and TAIEX գործիքների գործառնությանն աջակցության ծրագիր   |
| ՄԶՄԿ          | Մարդկային զարգացման միջազգային կենտրոն  |
| ՄԾԾ           | Միջնաժամկետ ծախսերի ծրագիր  |
| ՄՄԿ           | Միգրացիայի միջազգային կազմակերպություն  |
| ՄՄԻ           | Մտավոր սեփականության իրավունք   |
| ՍՖՍ           | Սանիտարական և ֆիտո-սանիտարական  |
| ԿԱՏՓԳ/TAIEX   | Տեխնիկական աջակցության և տեղեկատվության փոխանակման գործիք   |
| ՏՀԶԿ          | Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն  |
| ՔԻԽՀԵԿ/AEPLAC | Քաղաքական և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոն  |